

ԱՆՅԵԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԸ

ԵՐԻԱՆԴ ԴԱԶԱՐԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

Մանր և դիտուր պարտականութիւն է՝ լանձնառու լինել զրեւու անցած օրերի մասին... Յիշատակելով անցեալի երազալին գեղեցկութիւնները՝ մարդ ակամաջ աչքը դարձնում է ներկալի վրայ, ակամաջ ցանկանում է իմանալ թէ ինչ կապ, ինչ առնչութիւն կալ անցեալի և ներկալի մէջ, և ի՞նչ արդարացած են ներկայումս անցեալի երազները, լոյսերը։ Ներկան, աչն ներկան, որով մենք ապրում և տանջւում ենք, — մի կարարեալ հակասութիւն է մեր սպասածի և լոյսերի։ Ինչո՞ւմ է հակասութիւնը, — ամեն բանում. մեր ամբողջ կեանքը հակասութիւն է՝ աչն, ինչ որ լինելու էր և աչն, ինչ որ է... միմեանց հակապարկերներ են կարարեալ։ Ահա ալ անցեալի և ներկալի հակասութիւնը, երեակալած ու սպասած իդէալի և դառն ներկալի՝ ծալրալեղ, վրդովեցուցիչ իրականութեան հակասութիւնները՝ ահա թէ ինչ է ներկալացնում մեր ալժմեան կեանքը, ահա ինչ հոսանքներից է առաջանում մեր ալժմեան կեանքի փոթորիկը... երկու հակասութիւններ, ծալրալեղ հակասութիւններ։ Ի հարկէ

¹⁾ Տես սկիզբները Մուրճ 1894 Նոյեմբ 10 և 12։

Նորոգ հանգուցեալ դեռ ևս երկրորդ հեղինակի լոգալի ալս վերջին կտորը, դրած ու լանձնած մեզ լոգածի երկրորդ մասը տպւելուց չեղով, մենք իւր ժամանակին չտպագրեցինք զլիաւորապէս վերջին որդերի պարճառով, որոնց մէջ մենք նկատեցինք առնչութիւն հեղինակի անհատական կեանքի մի զէպրի հետ։ Անձնական պարճառը վերացած լինելով՝ տպագրում ենք ալս վերջին մասը, առանց որ և է փոփոխութեան, լոկ որպէս հեղինակի մի աւանդ։

Հանգուցեալ Ն. Ղազարեանից մնում են մեզ մօր ալ ձեռագրեր լանձնած մեզ, մեծ մասամբ ներկալ լոգածից չեղով։ ԻՄԲ.

ամեն մարդ չի զգում ալդ սպանիչ հակասութիւնների պարտաւորւած արող կսկիծը. ոմանք չափազանց կուշտ և բաղդաւոր լինելուց, շարերն էլ չափազանց աղքատ ու ճնշւած, նւագած, բթացած լինելուց՝ անընդունակ են դառնել հասկանալ մեր կեանքի ներքին, օգեկան, բարոյական թերութիւնները: Ի՞նչ կարող է հասկանալ և զգալ հասարակաշի վաճառականը, որի կարծիքով կեանքի մէջ ամեն բան առևտուր է, որ բացի կոսիէկների ու մանէթների տեսակէտից՝ ուրիշ բարոյական հիմք չունի իր բոլոր մտքերի ու ձգտումների մէջ: Առևտուր—ամեն բան առևտուր... Ապրանքի առևտուր, մարդկանց չարաքերութեանց առևտուր, ծանօթութեան, բարեկամութեան, ընկերութեան առևտուր, վերջապէս խղճի, զգացմունքի, սիրոյ և արեւութեան առևտուր... Ամեն, ամեն բան՝ առևտուր: Այս է մեր վաճառական և, առհասարակ՝ հարուստ, ապահով դասակարգի բարոյականութիւնը—նրա հաւատով հանգանակը: Ի՞նչ կարող է հասկանալ և զգալ խեղճ արհեստաւորը, կամ երկրագործը, որ ամբողջ օրը կուայած աշխատանքի վրայ աչքը չի էլ կարողանում բարձրացնել դէպի Աստուծոյ երկինքը. որ ամբողջ իր կեանքում զբաղւած է վաղւան կոտոր հացի խնդրով: Բարոյական իղէալ, հոգեկան վտնմ պահանջներ, —ալդ ամենը անհասկանալի, անմարդէլի բաներ են նրա համար: Նա ինքը կեանքի ճնշող հանգամանքների զոհն է, նա ինքը, իր սեփական շէնքի վրայ տանում է անարդարութեան ծանր լուծը. բայց նրանում չկալ գիտակցութիւն, չկալ ինքնաճանաչութիւն—և նա իր ալդ ճնշւած, զրկւած ու անարգւած դրութիւնը համարում է բնական, անխուսափելի և իր առօրեայ կորած չոր հացի ու խմած սառը ջրի համար՝ անդադար փառք է տալիս Աստուծոյ: Կեանքի հակասութիւնները սրան ևս անհասկանալի են, ալդ կողմից սա ևս բաղդաւոր է...

Մնում է մի դասակարգ, մնում են մի խումբ մարդիկ հասարակութեան մէջ: Կարծես միաջն դրանց համար լինի հնարած ամեն տեսակ բարոյական հասկացողութիւններ. և՛ խիղճ և՛ զգացմունք, և՛ պարտաճանաչութիւն, և՛ սէր, և՛ տանջանք, և՛ արեւութիւն: Ալդ մարդկանց դժւար է ինտելիգենտ անունը տալ, որովհետև չափ փչացրած ու խեղաթիւրած է ներկայումս ալդ անունը. ինտելիգենտ անուն տալ ալժամ մեր մէջ ապրում և գործում են կատարեալ ժուլիկներ, հացկատակ անբան անասուններ, վերջապէս մադոննան, դաւաճաններ... Խիղճ, պարտաճանաչութիւն, մարդկային պատիւ և արժանաւորութեան հասկացողութիւն՝ բոլորովին գոլութիւն չունին ալդ տեսակ «ինտելիգենտ» մարդոց համար: Իսկ այն մարդիկ, որոնք առաջնորդւում են խիստ բարոյական սկզբունքներով, որոնց համար կեանքի մէջ ամեն բանից բարձր է՝ իրանց համոզմունքներն ու գաղափարները, որոնք շնորհիւ իրանց ամուր համոզմունքների ու բարոյական նուրբ պահանջմունքների՝ կեանքի մէջ միշտ հալածանքների ու զրկանքների են մատուցւած,—զրկւած են նույն իսկ ամենահասարակ, տարրական չարմարութիւն-

ներից ու վալելքներինց՝—ալգպիտիները շար անգամ զրկած են լինում նաև ինտելիգենտ անունը վալելելու իրաւունքից։ Ալգ ալն մարդիկն են, որոնց համար խղճի դատաստանը ամեն բանից բարձր է, որոնք զիրեն անկեղծ հաւատալ, անկեղծ ոգեւորել ու գրաւել, որոնց համար գոյութիւն ունի կեանքի մէջ բարոյական գեղեցկութիւն, հոգեկան վսեմ ու ազնիւ ձգտումներ, որոնք զիրեն վերջապէս խորը սիրել ու տանջելը—Ալգ ընդունակութիւնով կարելի է չափել նաև մարդու բնաւորութեան ազնւութիւնը... Իդէալի և իրականութեան հակասութիւնը ամենից շար վիրաւորանք ու տանջանք նրանց է պատճառում։ Ալգ բանը մենք գիրենք մեր սեփական փորձից, մեր սեփական կաշու վրայ զգացածից... Նստեցի որ սիրելու և տանջելու ընդունակութիւնով կարելի է չափել մարդու բնաւորութեան ազնւութիւնը. ճիշդ է, որովհետև սիրել ու տանջել կարելի է՝ ոչ միայն մի կնոջ համար, այլ և մի գաղափարի, մի բարձր իդէալի համար, ալ և հայրենիքի, ժողովրդի, մարդկութեան համար։ Ալն սէրը, որ մեզ ոգեւորում, կազդուրում, խրախուսում էր պատանեկան հասակի մէջ՝—սէր դէպի գիրութիւնը, սէր դէպի վերացական ճշմարտութիւնը, սէր դէպի ազնււր, բարձր, իդէալականը—ալգ սէրը ներկայումս դառել է մեզ համար տանջանք, պատուհաս։ Այժմեան կեանքի իրականութեան մէջ բոլորովին հարկաւոր չեն ալն սրբութիւնները, որոնցով մենք ապրում էինք, որոնցով մենք երդում էինք։ Օրինակ՝ ազնւութիւնը... Մեր պատանեկան հասակում ունեցած ազնւութեան դաղափարը ալժմ կարելի է գտնել միայն գրքերի մէջ—ալն գրքերի, որոնցով մենք սնուել ու մեծացել ենք։ Ալն երևելի գրքերի, կամ, աւել ճիշդ ասած՝ նրանց անմահ հեղինակների քարոզած ազնւութիւնը շար բան էր պատանջում մարդուց,—ալնքան շար, որ ազնւութիւնը, փառքը և անձնութեան շանքը հասանի խօսքեր էին մեզ համար։ Մինչև հիմալ էլ, երբ ես մտածում եմ որ և է մարդու հասարակական գործունէութեան մասին՝ շար անգամ միտք է գալիս ուսու բանապիղծի նշանաւոր որանաւորը՝ «Գործըլիւրովի վիշափակին» նւիրած...

Суровъ ты былъ. Ты въ молодые годы
Умѣлъ разсудку страсти подчинять;
Училъ ты жить для славы, для свободы,
Но болѣе училъ ты умирать.
Сознательно мірскія наслажденья
Ты отвергалъ, ты чистоту хранилъ,
Ты жаждѣ сердца не далъ утolenья;
Какъ женщину, ты родину любилъ,
Свси труды, надежды, помышленья
Ты отдалъ ей Ты честныя сердца
Ей покорялъ. և այլն.

Ի հարկէ Դոքորիւբովը մի բարոյական հակա էր և նրա գործունէութեան օրինակը չի կարող պարտադիր լինել ամենքի համար: Այն, օրինակին հետեւելը մեր, հասարակ մահկանացուներիս ուժերից վեր է, բայց ես խօսում եմ այստեղ միայն գաղափարների, հասկացողութիւնների մասին: Մենք էլ ալդպէս էինք հասկանում ազնւութիւնը. մեր համոզմունքով աղնիւ չէր նա, ով մորածում էր մի կերպ, վարում էր ուրիշ կերպ, ով չէր աշխատում կեանքի մէջ իրագործել իր սիրած ու պաշտպանած գաղափարները: Իր մտքերին, համոզմունքներին հակառակ գործելը ամենամեծ սորոթութիւնն էր համարում մեզ համար: Դեռ աւելի ևս, ազնւութեան գաղափարը մենք միշտ կապում էինք լաւաջաղիմութեան, լուսաւորութեան, ազատամրութեան հետ. մեր կարծիքով՝ հին, պահպանողական, աւանդական մտքերի տէր մարդը չէր կարող աղնիւ լինել՝ բառիս բուն նշանակութեամբ... Այս պարճառով, պահպանողական լրագրները («Մեղու» «Նոր-Դար»), «Արձագանք» դեռ մինչև հիմա էլ մեր աչքում երևում են, որպէս անաղնիւ հրատարակութիւններ: Իսկ «Մշակը», ընդհակառակը, ամենից շատ մեզ դուր էր գալիս իր աղնիւ, անխարդախ, ճշմարտախօս ուղղութիւնով: Գրիգոր Արծրունին մեզ համար ազնւութեան, արդարադատութեան, անկեղծութեան մի կադարելարիպ էր. նրա աղնիւ ու առաջադէմ գաղափարներով ներշնչած լուսածները, նրա պարզախօս, անվախ ու համարձակ պոլեմիկական գրածքները մի մի ուժեղ հարեանք էին, որոնցով նա մեզ շարժում, ցնցում, դուրս էր հանում մեր գաղափարական թիւրիմացութիւններից... Մանաւանդ նշանաւոր էին մեզ համար նրա լարճակունքները տգիտութեան, խաւարի, ասիական կոպիտ հասկացողութիւնների դէմ: Այդ կողմից ևս նա մեզ սաստիկ դուր էր գալիս: Արծրունու լորեքեանի առթիւ ևս, բոլորովին ինքնաբերաբար, մի փոքրիկ ողորդաւոր գրեցի, որտեղ գովում եմ նրան հէնց այդ կողմից: Այդ ողորդաւորը, որպէս անկեղծ սրտից բղխած մի արդիւնք, որպէս կարծիք մի անվորճ երիտասարդի, որը բոլորովին ինքնուրոյն ու ազատ կերպով լալորնում է իր կարծիքը մի նշանաւոր գործիչի մասին՝ կարենո է: Մանաւանդ որ նրանում արտալալութում է նաև մեր այն ժամանակաւ սեփական աշխարհայնչողութիւնը... Ողորդաւորը հետեւեալն է.

Երանի՛ նրան, որ գիտէ ապրել
Գաղափարների բարձր հոսանքով,
Որ գիտէ սիրել ճշմարտութիւնը
Իր աղնիւ հոգու բոլոր ուժերով.

Որ գիտէ կուել տգիտութեան դէմ,
Հալածել մութը կէս գիշերակին,
Եւ ալդ կուի մէջ գոհել ամեն բան, —
Ամեն հրապուրանք, վալելք մարդկային.

Այդ բոլորի տեղ նա ստանում է
 Աննիւթ, հոգեկան մեծ զարճութիւն,
 Այդ բոլորի տեղ նա ժառանգում է՝
 Սէր, համակրութիւն և անմահ անուն.

Եւ մինչև չլուծուի էլ պատրաստ եմ ստորագրել այս որոշումների տակ,
 որովհետև նրանում չափոնա՝ մտքերը մազի չափ անգամ չեն փոխել ին-
 ձանում:

Խօսքս ազնուութեան վրայ էր. ուրեմն մեր հասկացած ու դաւանած
 ազնուութիւնը՝ պահանջում էր մարդուց զոհաբերութիւն, անձնուրացու-
 թիւն: Հաւարը՝ առանց գործի—մեռած է. այնպէս էլ ազնուութիւնը՝
 առանց զոհաբերութեան,— չէզոք ու անգործ ազնուութիւնը՝ մեռած, ան-
 օգուտ բան է...

Այդ տեսակէտից՝ ազնիւ չեն նրանք, ով ոչ օգուտ է տալիս ուրիշ-
 ներին՝ ոչ վնաս. ազնիւ չեն ալն չէզոք անձնաւորութիւնները, որոնք
 սահմանափակուած են լոկ իրանց և մօտիկ բարեկամների շահերով, ինտե-
 րեսներով—ազնիւ չեն ալն բոլոր պատուաւոր ու «ազնիւ» քաղաքացիք,
 որոնք լոկ իրանց կեանքը զանազանակերպելու համար՝ ձեռնարկում են
 այս կամ այն օգտաւէտ գործին, այս կամ այն ընդհանուր շահերին ծա-
 ռալով փոքրիկ բարեգործութեան... «Ով որ իր խաչը չի վերցնում ու չի
 զալիս իմ չեղելի» նա չէ ինձ արժանի» — իսուսի այս խօսքերը չափ լաւ
 բնորոշում են մեր ունեցած հասկացողութիւնը՝ ազնուութեան մասին: Այս
 տեսակ հասկացողութեամբ կեանքի մէջ մտնողը՝ ի՞նչ եղբակացութեան
 կը գալ՝ երբ ամեն օր իր շուրջը նկատէ, որ մարդիկ սովորաբար և՛ խա-
 բում են, և՛ կեղծում են, և՛ գողանում են, և դաւաճանում են
 միմեանց,— ու դարձեալ շարունակում են ապրել, ու դարձեալ նրանց
 լեզուի վրայ գործածական խօսքեր են. «ազնիւ մարդ», «պատուաւոր
 քաղաքացի», «անկեղծ բարեկամ», «հաւատարիմ ընկեր» և ալ ուրիշ տե-
 սակ անտեղի խօսքեր,— ի՞նչ եղբակացութեան կը գալ մաքուր և հապա-
 կանած մի երիտասարդ, երբ իրականութեան մէջ տեսնի, որ աշխար-
 հում ամեն բան թարս է, որ կեանքի մէջ անբարոյական, խաբերայ,
 կեղծաւոր մարդիկ՝ ազնուութեան ու առաքինութեան դափնին եւ վա-
 չելով, իսկ ճշմարիտ ազնիւ, ճշմարիտ, առաքինի ու գործունեալ, անձնա-
 զոհ մարդիկ հալածուած են մեր մէջ՝ անչափութեան, աղքատութեան ու
 ցեխերի մէջ են անցկացնում իրանց օրերը... Այս դատարկ խօսքեր չեն,
 ընթերցող, այս մեր կեանքի իրականութիւնն է. խղճի, զգացմունքի և
 բարոյականութեան հակասող իրականութիւնը, չլինում եմ. ի՞նչ կը զգալ
 մի երիտասարդ, որի մէջ խիղճը դեռ չէ մեռած, որի զգացմունքները դեռ
 թարմ են՝ տեսնելով մեր կեանքի այդ խորը հակասութիւնը՝ գաղափարի,
 իդէալի հետ: Եւ քանի մարդ զգալուն ու մաքուր է հոգեպէս, քանի ու-
 ժեղ են նրա բարոյական համոզմունքները, թանգ են նրա համար նւիրա-

Վասն դարձած սկզբունքները՝—ալնքան էլ դժւար կը լինի նրան աւա-
նորես լինել, համոզել ու շօշափելի կերպով զգալ, որ կեանքը,
առօրեայ կոպիտ կեանքը՝ ոչինչ կապ չունի ազնիւ գաղափարի ու իդէալի
հետ, որ մարդիկ ամեն մի լուպէ դաւաճանում են ալդ գաղափարին, որքի
դակ առնում և հանգիստ խղճով ապականում են ամեն րեսակ սրբութիւն...
Մարդիկ ամենալն օր ոչ միայն իրանք դաւաճանում ու որոնակոխ են անում
ամեն րեսակ սուրբ գաղափար, այլ և հաւածում, անդուծ կերպով ոչըն-
չացնում են ամեն րեսակ ազնուութեան, վսեմ գաղափարի, կամ սկզբունքի
ներկայացուցիչներին... Մեր ալժմեան, առօրեայ կեանքում՝ շատ սովո-
րական բան է դառել ալն պահանջը թէ՛ մարդը պիտի ազնիւ լինի, թէ՛
ազնութիւնը առաքինութիւն է, թէ՛ ազնիւ մարդիկ արժանի են պառւելի,
չարգանաց... Ալդ խօ ինքն ըստ ինքեան, բալց երբ ազնիւ մարդը դուրս է
գալիս մեր մէջ՝ իր վսեմ համոզմունքներով ու ձգտումներով, և մեզ հրա-
ւիրում է գործի,—մենք (մեր ալժմեան հասարակութիւնը) կասկածով
ենք վերաբերում դէպի նա, բամբասում, աշխատում ենք անւանարկել
նրան, աշխատում ենք արարաւորել նրա մաքուր անունը... Մեր հասա-
րակութիւնը չի հաւատում նրան, չի ընդունում նրա ձեռնահասութիւնը,
որովհետեւ ազնիւ սկզբունքների ու գաղափարների տէր մարդը անտանելի է
նրա համար՝—կեղծաւոր, չորոքորթ մարդոց հովանաւորող, պաշտպանող
ու սիրող հասարակութեան, իւր ալդպէս՝ մոտենելով կեանքի մէջ, չլիւնով
մեր հասարակութեան զանազան խաւերի հետ՝ գրքերի ու բարոյա-
կան համոզմունքների ազդեցութեամբ դաստիարակած, սնւած երի-
տասարդ մի շարք դառն փորձերից, անաջողութիւններից լեկող՝ կա-
տարելապէս հիասթափում է իր «վերացական երանութիւնից», համոզում
է, որ կեանքը ոչ գիրք է և ոչ գաղափար... Կեանքը մի կոշտ, կոպիտ
իրողութիւն է, փաստ է, որ ունի իր սեփական *raison d'être*-ը, իր սեփա-
կան որամբանութիւնը։ Եւ մեր հասարակութիւնը ապրում է ալդ իրո-
ղութիւնով, ալդ կեանքով. կեանքի պրոցէս կատարելը, ապրելու փա-
փազը ամեն բանից բարձր է հասարակութեան համար,—թէ բարձր գա-
ղափարներից և թէ՛ ազնիւ գրքերից։ Եւ ալդ պարճաւով լոկ ազնու-
թիւնը, համոզմունքների ու խղճի հետեւելը, սուրբ նպատակների ու ձրդ-
տումների տէր լինելը՝ համարւում են մեր մէջ վերացական, օգալին, ան-
հասկանալի բաներ, հանդիպում են կեանքի մէջ ոչ միայն խոչնդոտներին,
այլ և կատաղի հաւածանաց։ Հիասթափւած, ջախջախւած, դանջւած երի-
տասարդը ալամալ հաշտւում է ալն մտքի հետ, որ ազնութիւնով, համոզ-
մունքով ու բարձր գաղափարներով չի կարելի ապրել կեանքի մէջ... որ
առօրեայ, գործնական կեանքը պահանջում է մարդուց բարոյական սորո-
րութիւն, բարոյական զիջումներ։ Մեր պատանեկան անցեալի, փալլուն,
ճաճանչաւոր անցեալի լիշատակը ալդ է միացել մեզ համար։ Ո՛րպիսի
դառն լիշատակ։